սպառնալ միարանաց, և նետաձիգ լինել 'ի ներքս 'ի վանս։ զի բացցին զդուռն՝ այլ վրիպեալ 'ի յուսոյ՝ դարձան յետս կորակոր։ Եւ 'ի լուսանալ առաւօտուն Աստուածատուր Պատրիարք ծանոյց զեղեալսն Բդեշխի քաղաքին, եւ նա առաքեաց զմին 'ի պաշտօնէից իւրոց առ դատաւորն՝ եւ ազդ արար նմա քննել և 'ի գիր հարկանել զեղեալսն 'ի վանս Ս. Փրկչի. և նա առաքեաց զարս երկուս ընդ պաշտօնէի Բդեշխին, և նոքա եկեալ գտին զերիս մեծամեծ քարինս թաւալեալ առաջի դրան վանաց. տեսին զկեղեւեալ ծառս ճիթենեաց և զքարինս թաւալեալ 'ի գերեզմանաց, եւ միաբանք բերեալ արկին առաջի նոցա զնեռս ճգեալս յաւազակաց, յետ քննելոյ զայս ամենայն դարձան 'ի տեղիս իւրեանց. յԺ Ռամազան ամսոյ՝ \.ՕՂ (1646)։

Աստուածատուր Պատրիարք հրամանաւ դատաւորին ձեռն արկ չինել և նորոգել զվանս Ս. Հրեշտակապետի. և քակեալ զփայտաշէն զերիս սենեակս 'ի կողմն հիւսիսոյ, արար քարուկիր. և զերկուս սենեակս 'ի կողմն արեւելից։ Յետ աւարտելոյ զայնս՝ եկն դատաւորն և քննեալ եդիտ զամենայն ինչ ըստ հրամանի իւրոյ, և ետ անդորրագիր 'ի ձեռս Պատրիարքին։

Զայրացեալ ընդ այս այլազգեաց Երուսաղէմի՝ բողոք կալան առ կուսակալն Դամասկոսի և ամբաստանութեամբ զրպարտէին՝ թէ Հայք կառուցին զնոր չինուածս ընդդէմ օրինաց և կայսերական հրամանին, և նա առաքեաց զմին 'ի պաշտօնէից իւրոց Մուրթազա անուն, թղթով առ դատաւորն Երուսաղէմի հարցանել վասն չինուածոց։ Իսկ դատաւորն կոչեաց զմեծամեծս քաղաքին, ուր էր և Սարգիս Թարգմանն Հայոց, և ընթերցաւ զթուղթն առաջի նոցա, ապա հարցին զԹարգմանն վասն նորոգութեանց, եւ նա արար պատասխանի. Պատրիարքն Հայոց նորոգեաց զվանս Ս. Հրեշտակապետի հրամանաւ դատաւորին եւ քննութեամբ այլազգեաց, և գտին զնա 'ի ձեւն առաջին. ահաւասիկ գրեանք դատաւորին և քաղաքապետին, և ընթերցեալ գտին զամենայն ինչ ըստ հրամանին։ Ապա խնդրեաց Սարգիս, սանձել զբռնութիւնս այլազգեաց որք տարապարտուց յարուցեալ չարչարեն զՀայս։

Յետ աւարտելոյ նորոգութեանց Ս. Հրեշտակապետի,